

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՈՐԱՎԱՐԱՑ ՏՈՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այս տարի ևս Մայր Աթոռում հանդիսավորությամբ նշվեցին «Սրբոց Ղևոնդեանց քահանայից» և «Սրբոց Վարդանանց զորավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին» տոնը և Հայոց Վեհափառ Հոր անվանակոչության տարեդարձը:

Փետրվարի 17-ին, հինգշաբթի օրը, Մայր տաճարում, ս. Վարդանանց տոնի առիթով, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Վահան եպս. Տերյանը: «Հայր մեր»-ից առաջ կատարվում է հոգեհանգիստ՝ «վասն համօրէն ննջեցելոց ազգիս հայոց»:

Հավարտ ս. պատարագի Իջման ս. սեղանի առջև օրվա տոնի եկեղեցասիրական և հայրենասիրական նշանակության մասին բովանդակալից քարոզ է խոսում պատարագիչ սրբազանը՝ որդիական երախտագիտությամբ և շնորհակալությամբ շնորհավորելով Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը: Ապա կատարվում է հայրապետական մաղթանք:

Նույն օրը, ժամը 13-ին, ս. Վարդանանց տոնի առիթով, հոգևոր ճեմարանի հանդիսության դահլիճում տեղի է ունենում հանդես՝ նախագահությամբ Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանի:

Նախագահության սեղանի շուրջ տեղ էին գրավել նաև լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանն ու փոխտեսուչ տ. Անանիա վրդ. Արաբաջյանը:

Հանդեսն սկսվում է Հայաստանի պետական հիմնի կատարմամբ, որին հաջորդում է «Ճեմարանի քայլերգ» խմբերգը:

Հանդիսության առիթով բացման խոսք է ասում հոգևոր ճեմարանի փոխտեսուչ տ. Անանիա վրդ. Արաբաջյանը:

Ապա ճեմարանի սաները ոգևորությամբ կատարում են «Նորահրաշ պսակաւոր» և «Արիացեալք» շարականները:

Օրվա խորհրդին նվիրված զեկուցումով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասախոս, դոցենտ Սիմոն Կրկյաշարյանը:

Հարգելի բանախոսը հակիրճ, բայց ամբողջական ձևով վեր է հանում Ղևոնդյանց և Վարդանանց կատարած հերոսական սխրանքը Ե դարի կեսին հայ ժողովրդի պատմության ճգնաժամային ու ծանր օրերին:

Վարդանանց պատերազմը միակ պատերազմն է եղել հայոց վաղ անցյալի պատմության մեջ, որին իր մեծ մասնակցությունն են բերել հավասարապես հայ ժողովրդի բոլոր դասերի ներկայացուցիչները: Այլ խոսքով՝ այդ կռիվը հայրենական պատերազմի բնույթ է ունեցել:

Հարգելի բանախոսը վերջում, որդիական երախտագիտությամբ շնորհավորելով մեր սիրելի Հայրապետի անվանակոչության տարեդարձը, ասաց.

«Վարդանանց ու Ղևոնդյանց այս տոնի առթիվ պարտք ենք համարում հիշել, որ այսօր տոնն է նաև անվանակոչության ազգիս Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա

կաթողիկոսի: Շնորհավորում ենք Վեհափառին և ի սրտե մաղթում, Իր գահակալության 22-րդ տարեդարձի առթիվ, որ Տերը երկար կյանք պարգևի Նորին Սուրբ Օծության՝ ի փառս Հայաստանյայց սուրբ եկեղեցու և ի բարօրություն հայ ժողովրդի, որ ի Հայաստան երկրի և ի սփյուռս աշխարհի»:

Բանախոսությունից հետո գործադրվում է գեղարվեստական մի հայտագիր՝ հոգևոր ճեմարանի ուսանողության կատարմամբ:

Սուրբ Ղևոնդյանց և Վարդանանց հիշատակին նվիրված հանդիսությունն ավարտվում է տ. Արսեն եպս. Բերբերյանի խոսքով: Նախագահող սրբազանը մի անգամ ևս ոգեկոչում է հայ եկեղեցու և հայ ժողովրդի նահատակների խնկելի հիշատակը, որոնք ընկան 451 թվականի մայիսի 26-ին Ավարայրում, 1036 հայ քաջերի հետ միասին՝ «վասն Հիսուսի և վասն հայրենեաց» ոգված անհավասար մարտում:

Սրբազանն իր խոսքում կոչ ուղղեց Մայր Աթոռի միաբանությանը և հոգևոր ճեմարանի ուսանողությանը՝ միշտ ոգևորվել և առաջնորդվել ս. Ղևոնդյանց պանծալի քահանաների զոհողության ոգով և Վարդանանց քաջամարտիկ հերոսների հայրենասիրական սիրանքով:

Իր խոսքի վերջում սրբազան հայրը որդիական երախտիքով, հանուն Մայր Աթոռի միաբանության, մի անգամ ևս շնորհավորեց Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը՝ մաղթելով Նրան երկա՜ր-երկա՜ր արևոտ տարիների կյանք Լուսավորչի դարավոր սուրբ գահի վրա՝ ի պաշտպանություն Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի, ի միխիթարություն հայ ժողովրդի, որ ի սփյուռս և ի հայրենիս, և ի բարօրություն հայրենեաց: